Հայ-Ռուսական համալսարանի
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության
063 մասնագիտական խորհրդին

(Հասցե՝ 0051, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Հովսեփ Էմինի փողոց, 123)

17.07.2023

ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, Դավթյանի Անի Համլետի

Սիմոնյան Անդրանիկ Արամի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Օպերատիվ հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրները հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում՝ հրապարակային պաշտպանությանը ներկայացված Անդրանիկ Սիմոնյանի գիտական ուսումնասիրությունը վերաբերում է օպերատիվ հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրներին, որոնք գործնական դռսևորումներ ունենալով, պահանջում են նոր տեսաիրավական լուծումների անհրաժեշտություն՝ օրենսդրական փոփոխությունների համար գիտական

հիմքեր ստեղծելու նպատակով, որը արդի փուլում հատկապես կարևորվում է վերը նշված մարմինների մասնակցությամբ հանցագործությունների առավել ադյունավետ քննության և դրանց կանխարգելման համար:

Ատենախոսության, նրա սեղմագրի վերլուծությունը և դրանց բովանդակությունը արտահայտող գիտական հոդվածների առկայությունը, այդպիսի համալիր ուսումնասիրության բացակայությունը հայրենական իրավագիտության մեջ, համոզմունք է ստեղծում կատարված գիտական հետազոտության արդիականության մասին՝ հեղինակի կողմից տեսագործնական խնդրի նոր լուծումներ և մոտեցումներ ձևավորելու առումով:

Թեկնածուական ատենախոսությունը և նրա սեղմագիրը՝ բովանդակային և կառուցվածքային առումով, համապատասխանում են նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Գիտական աշխատությունը կազմում է 142 էջ, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված տեսապրակտիկ աղբյուրների ցանկից:

Ներածության մեջ հեղինակին հաջողվել է հիմնավորել թեմայի արդիականությունը, որի հիմքում այն գաղափարն է, որ մինչ այժմ խնդրահարույց և մշակված չէ հանցագործությունների կանխարգելման մասով պատշաճ օրենսդրական հայեցակարգ, մասնավորապես, օպերատիվ հետախուզական և քննչական մարմինների փոխգործողության առումով, ինչը և պայմանավորել է ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, թեմայի մշակվածության աստիճանն ու տեսահիրավական, փորձարարական և մեթոդաբանական հիմքերը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի հետազոտության գիտական նորույթը, որն արտահայված է պաշտպանությանը ներկայացված 7 դրույթներում, որտեղ գիտական նոր առաջարկների ներդրման նպատակով, ներկայացված են «հանցագործության կանխարգելում» հասկացությունը՝ որպես հանցագործությունների կանխարգելման բովանդակային էության բազմակողմանի վերլուծության արդյունք, հիմնավորվել է հանցագործությունների կանխման համար իրականացվող աշխատանքների տարբեր մարմինների ուղղահայաց և հորիզոնական համակարգման կազմակերպումը՝ որպես

հանցագործությունների կանխարգելման արդյունավետ նախապայման, հիմնավորվել է համապատասխան իրավական ակտերի ընդունումը՝ օպերատիվ հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության քրեադատավարական և կազմակերպահիրավական հարաբերակցությունը հստակեցնելու համար, տրվել է ընդարձակ մեկնաբանություն ՕՀԳ արդյունքների օգտագործման եզրույթի վերաբերյալ, ինչպես նաև դրանք օգտագործելու մարտավարական տակտիկական ձևերը, հիմնավորվել է հանցագործություններից տուժածներին օգնելու համար հանրային միջոցների տրամադրումը, հաշվի առնելով վերջիններիս մասնակցությունը հանցավորության կանխարգելման գործընթացում:

Ներածության մեջ հիմնավորվում է նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, նրա բովանդակային կառուցվածքի՝ հետազոտության նպատակներով և գիտագործնական խնդիրներով պայմանավորված լինելը:

Ատենախոսության առաջին գլխում (էջ 15 - 53) հեղինակի կողմից ուսումնասիրված է հանցագործությունների կանխարգելման իրավական բնույթը, որը ներառում է հանցագործությունների հասկացությանը և նրա բաղադրատարրերին առնչվող հարցերը, օպերատիվ հետախուզական գործունեության և նրա կիրառման պայմանների և միջոցառումների վերլուծությունը, տեսական հիմքերն ու կազմակերպման մարտավարությունը, հանցագործությունների կանխման իրավական հիմքերը, նրա կազմակերպչական ձևերը, վիկտիմիոլոգիայի՝ որպես քրեագիտության ուղղության նկատմամբ հեղինակի հայեցակարգի և հանցագործությունների վիկտիմինոլոգիական կանխարգելման մասին մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ գլխում (էջ 54 - 77) ուսումնասիրված են հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործակցության տեսահիրավական հիմքերը: Բացի դրանից, նշված գլխում լուսաբանվում են քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործակցության կազմակերպահիրավական հիմքերն ու ձևերը:

Գիտական աշխատության երրորդ գլխում (էջ 78 - 128) պարզաբանված են ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության արդյունավետության կատարելագործման ուղղությունները: Ուսումնասիրված են ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության համակարգմանը վերաբերող հարցերը, համակարգման արդի մոդելներն ու տեսակները, փոխգործակցության մարտավարությունը, մասնավորապես, հանցագործության քննության պլանավորման փուլերն ու սկզբունքները և դրանց դասակարգման վերաբերյալ հեղինակի մոտեցումները, ՕՀԳ արդյունքների մասին հասկացությունը և դրա կիրառման տակտիկան, ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության խնդիրները:

Գիտական աշխատության եզրակացության մեջ ամփոփված են կատարված ուսումնասիրության արդյունքները, որոնք թույլ են տալիս դրական կարծիք կազմելու ատենախոսության մասին:

Սակայն, վերջինս զերծ չէ նաև որոշ թերություններից, որոնց վերաբերյալ ներակայացնում եմ մասնագիտական դիտարկումների արդյունքում ստացված հետևյալ դիքորոշումները, որոնք չեն ազդում ատենախոսության գիտական որակի վրա, բայց վկայում են առանձին դրույթների հստակեցման կարևորության մասին:

Առաջին՝ պաշտպանությանը ներկայացվող 1-ին դրույթում (ատենախ. էջ 10, 20, սեղմ. էջ 1) տրվում է «հանցագործությունների կանխարգելում» հասկացությունը, որը մասամբ թերի է, քանի որ հասկացությունը չի հստակեցնում, քաղաքացիների մասով, նրանց մասնակցության սահմանները և վերջիններիս կողմից իրականացվող միջոցառումների բնույթը և առնչության մակարդակը դրանց իրականացման պարագայում պատկան մարմինների գործողությունների հետ:

Երկրորդ՝ պաշտպանությանը ներկայացված 3-րդ դրույթում (ատենախ. էջ 11, 72, 131, սեղմ. էջ 10), հեղինակը հիմնավոր է համարում համապատասխան իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, որով որոշակիացվելու են փոխգործողության քրեադատավարական և կազմակերպական տարրերի հարաբերակցությունը:

Սակայն, նշված դրույթում հեղինակը չի հստակեցնում, թե կոնկրետ՝ ո՞ր իրավական ակտերի ընդունումը և ո՞ր իրավանորմերի ընդունումը պետք է ստեղծի վերը նշված իրավական տարածքում առաջնային անհրաժեշտ իրավակարգավորումները:

Ավելորդ չէ հավելել, որ այդ կողմնորոշումը կարևոր է, քանի որ աշխատության որոշ էջերում հեղինակը նույն դրույթի մեկնաբանման մեջ նշում է, որ դրանք պետք է լինեն գերատեսչական ակտերը, մյուսներում՝ քրեական դատավարության օրենսգիրքի կարգավորումները:

Երրորդ՝ պաշտպանությանը ներկայացվող 7-րդ դրույթը (ատենախ. էջ 13, 53, 130, սեղմ. էջ 11, 12) վերաբերում է հանցագործությունից տուժածներին օգնելու հանրային և պետական հիմնադրամներ՝ տարածքային և տեղական մակարդակներում ստեղծելուն, որտեղ կարևորվում է զոհերի սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռումը և նրանց գործուն մասնակցությունը հանցավորության կանխարգելման գործընթացներում:

Նշված դրույթը հստակեցման կարիք ունի՝ ավելի որոշակի դարձնելու համար այն գաղափարը, թե նման մարմինների ստեղծման պարագայում այդ օգնությունը պետք է տրվի զոհերին նրանց հանցագործությունների կանխարգելման մասնացության պարագայում միայն, թե այն տրվելու է նաև հանցագործության արդյունքում ուղղակի տուժած անձանց, անկախ նրանց հանցավորության կանխարգելման միջոցառումներում մասնակցության՝ նաև բարեգործական նպատակներով:

Չորրոդ, գիտական աշխատության գլուխ III –ի, 3-րդ պարագրաֆը վերնագրված է՝ ՕՀԳ-ի և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության զարգացման միտումները (ատենախ. էջ 3, 115, սեղմ. էջ 15, 16), սակայն նշված պարագրաֆը բովանդակային առումով լուսաբանում է ոչ թե փոխգործողության զարգացման միտումները, այլ, հիմնականում, ՕՀԳ արդյունքների վերլուծության, գնահատման և նրանց կիրառման տակտիկայի հետ կապված խնդիրները:

Եզրակացություն: Սիմոնյան Անդրանիկ Արամի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Օպերատիվ հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրները հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում» թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, արդիական, նորույթ պարունակող համալիր գիտական ուսումնասիրություն է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին:

Ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ - հետախուզական գործունեության տեսություն») մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Դավթյան

Ա.Հ.Դավթյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

Հայ-Ռուսական համալսարանի
Գիտական քարտուղար՝ Ռ.Ա.Կասաբաբովա
Բ.գ.թ.